

Հայաստանի Հանրապետություն
Հայտերի ներկայացման հրավեր
Միջազգային մրցութային սակարկություն
Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր, փոխառություն No 817-AM

“ՀՀ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերի ջրամատակարարում, ՀՀ Տավուշի և Վայոց Ձորի մարզերի ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում” RACP/CW/ICB-2015/073

1. Սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների ընդհանուր ծանուցմանը, որն զետեղվել է “Development Business“ պարբերականի 2011թ. հունիսի 24-ին, ՍՆ331 թիվ 802 համարում:

2. Հայաստանի Հանրապետությունը Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից (ԳԶՄՀ) ստացել է փոխառություն “Գյուղական կարողությունների ստեղծում” ծրագրի ծախսերը հոգավու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել “ՀՀ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերի ջրամատակարարում, ՀՀ Տավուշի և Վայոց Ձորի մարզերի ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում” RACP/CW/ICB-2015/073 պայմանագրով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

3. ՀՀ կառավարության աշխատակազմի “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ պայմանագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 9 ամիս:

4. Մրցույթը կիրականացվի Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (ԳԶՄՀ) Գնումների Ուղեցույցների համաձայն (Սեպտեմբեր 2010)՝ Միջազգային մրցութային սակարկության եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:

5. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում՝

Կոնտակտային անձը՝ Գնումների բաժնի ղեկավար՝ Արթուր Գրիգորյան; Էլ. փոստ: procurement@raed.am:

բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:

6. Որակավորման չափանիշները ներառում են.

ա/ Վերջին երեք տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ **14,950,000,000.00 ՀՀԴ** կամ **31,146,000.0 ԱՄՆ դոլար**;

բ/ որպես գլխավոր կապալառու պետք է ունենա փորձառություն նմանատիպ բնույթի և բարդության 1 շինարարական աշխատանքներում վերջին հինգ տարիների ընթացքում;

գ/ շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չճանրաբեռնված՝ **935,000,000.0 ՀՀԴ** կամ **1,950,000.0 ԱՄՆ դոլար**;

7. Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում, գրավոր դիմում ներկայացնելու և **15,000.0 ՀՀ դրամի** կամ **40.0 ԱՄՆ դոլարի** չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը: Մրցութային փաթեթը կարելի է ձեռք բերել հայտերի

ներկայացման վերջնաժամկետից ամենաուշը մեկ շաբաթ առաջ:

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2015թ. սեպտեմբերի 19 -ը ժամը 15:00: Էլեկտրոնային եղանակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես, 2015թ. սեպտեմբերի 19 -ին ժամը 15:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:

9. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարը պետք է կազմի՝

112,100,000.0 ՀՀԴ կամ 233,540.0 ԱՄՆ դոլար;

Վերևում հիշատակվող հասցեն է.

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, տնօրեն Աշոտ Վարդանյան
հեռ. 37410 54 65 10 138; ֆաքս: 37410 58 80 58; Էլ. փոստ: procurement@raed.am;
**Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010200 /ՀՀ դրամով փոխանցումների համար/
Ամերիա Բանկ ՓԲԸ, հ/հ 15700 – 11483010301 /ԱՄՆ դոլարով փոխանցումների համար/**